ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2024թ. **N------Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՎԱՉԻԿ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն գրականագետ, ակադեմիկոս Վաչիկ Նալբանդյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Թումանյան փողոցի հ.9 հասցեում փակցնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՎԱՉԻԿ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գրականագետ-ակադեմիկոս Վաչիկ Նալբանդյանը ծնվել է 1919թ. փետրվարի 25-ին, Հայաստանի Նոր Բայազետի գավառում:

1936թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը:

1936-1967թթ. որպես դաստիարակ աշխատել է հայրենի քաղաքի մանկատանը:

1941թ. գերազանցության դիպլոմով ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը:

1941-1946թթ. ծառայել է խորհրդային բանակում, մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին, Հյուսիսային Կովկասում մղված մարտերին և արժանացել է մի շարք շքանշանների ու մեդալների:

1948-1950թթ. եղել է ՀԿԿ Երևանի Կիրովյան շրջկոմի քարտուղար: 1950-1952թթ.՝ ՀԿԿ Երևանի քաղկոմի կուսակցական օրգանների բաժնի վարիչ: 1952-1953թթ.՝ Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրեն: 1953-1956թթ.՝ ՀԿԿ Կենտկոմի կուսակցական օրգանների բաժնի վարիչ: 1956-1965թթ.՝ Երևանի համալսարանի պրոռեկտոր: 1965-1977թթ.՝ ՀԽՍՀ ԳԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն:

1966թ.՝ Հայաստանի գրողների միության անդամ:

1978թ. եղել է ՀԽՍՀ ԳԱ Նախագահությանն առընթեր գրադարանային խորհրդի նախագահ և հիմնակազմ գրադարանի տնօրենը:

Նալբանդյանի աշխատությունները հիմնականում վերաբերում են հայ հին և միջնադարյան գրականության պատմությանը՝ «Վարդանանց պատերազմը և Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանքը» (1955), «Թբիլիսին հայ մատենագրության մեջ» (1958, հայկական, ռուսական, վրացական), «Եղիշե» (1959) և այլն:

Վաչիկ Նալբանդյանը պարգևատրվել է Հայրենական մեծ պատերազմի II աստիճանի շքանշանով:

Վաչիկ Նալբանդյանը մահացել է 1998թ.փետրվարի 28-ին, Երևանում:

Գրականագետ-ակադեմիկոս Վաչիկ Նալբանդյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Թումանյան փողոցի հ.9 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդությունը ներկայացվել է Վաչիկ Նալբանդյանի դուստր՝ Աննա Նալբանդյանի կողմից: Հուշատախտակի պատրաստման և տեղադրման ֆինանսական ծախսերն իրականացվելու է ընտանիքի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների

իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ